ԱՐՎԵՍՏ

Զարինե Սարաջյան
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան
ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru
DOI: 10.54503/1829-0116-2025.2-257

ԱՐՑԱԽԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ. ԳԻՏԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ*

Բանալի բառեր *-Արցախ, հայ միջնադարյան արվեստ, ճարտարապետություն, գրականություն, մանրանկարչություն, պատմական հիշողություն:*

Հոդվածի նպատակն է բացահայտել ու վերլուծել Արցախի՝ որպես հայ միջնադարյան արվեստի և գրչության կենտրոնի նշանակությունը՝ ընդգծելով նրա քրիստոնեական ու հայկական ինքնությունը, մերժելով մշակութային օտարացման փորձերը և նպաստելով պատմական հիշողության պահպանմանը: Գրչության, ճարտարապետության, մանրանկարչության, գրականության և արվեստի մյուս ճյուղերի ուղղությամբ Արցախում ստեղծված կոթողները կարևոր դեր են ունեցել հայ մշակույթի ձևավորման և զարգացման գործում: Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել Արցախի մշակութային ժառանգության որոշ կոթողներ՝ անդրադառնալով գրավոր աղբյուրների վկայություններին, ձեռագրերի և մանրանկարչության նմուշներին, ճարտարապետական և քանդակագործական հուշարձաններին, բացահայտել այդ ժառանգության ոճական առանձնահատկությունները, տեղը և դերը հայկական միջնադարյան արվեստի համատեքստում: Ուսումնասիրության մեթոդներն են պատմագրական աղբյուրների համադրական և տեքստային վերլուծությունը, աղբյուրագիտական, պատմաճարտարապետական և արվեստաբանական մոտեցումները: Հիմնական եզրակացություններն են, որ Արցախը միջնադարյան Հայաստանում եղել է գրականության, մանրանկարչության և ճարտարապետության խոշոր կենտրոններից մեկը, որտեղ ձևավորվել է ինքնատիպ մանրանկարչական դպրոց, ծաղկել է վանքաշինությունը, զարգացել են քանդակագործությունն ու որմնանկարչությունը՝ պահպանելով ազգային առանձնահատկությունները: Գանձասարը, Դադիվանքը և այլ հուշարձաններ վկայում են մշակութային կյանքի բարձր մակարդակի մասին:

* *Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2025 թ.:*
Ուղարկվել է գրախոսության 03.07.2025 թ.:

Մատենագիրների վկայությունները հաստատում են Արցախի հայկական և քրիստոնեական ինքնությունը։

Ժամանակակից պայմաններում Արցախի մշակութային ժառանգությունը վտանգված է, ինչը հրատապ է դարձնում դրա գիտական վերարժևորումը, պաշտպանությունը և հանրայնացումը՝ որպես պատմական հիշողության և հայկական ինքնության պահպանման միջոց։ Հոդվածի նպատակներից են նաև ամրապնդել Արցախի հայկական մշակութային պատկանելության մասին պատկերացումները, խթանել պատմական հիշողության պահպանումը և ցույց տալ, որ 13-14-րդ դարերում Արցախը ոչ միայն տարածաշրջանային, այլև համահայկական նշանակության մշակութային կենտրոն էր՝ գրականության, ճարտարապետության, մանրանկարչության և գրչության ոլորտներում։

Zarine Sarajyan
PhD in Philology, Associate Professor
Insitute of Literature after M. Abeghyan of the NAS RA
Yerevan State University
ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru

ARTSAKH AS A CENTER OF MEDIEVAL ARMENIAN CULTURE: A SCHOLARLY CULTURAL STUDIES OVERVIEW

Keywords: *Artsakh, Armenian medieval art, architecture, literature, miniature, historical memory.*

Artsakh was an important cultural center of medieval Armenia, where literature, miniature painting, architecture, and sculpture flourished.

The 13th–14th centuries marked a period of cultural renaissance in Artsakh, during which luxurious manuscripts were created, monastic complexes were constructed, and artistic thought thrived.

Miniature painting in Artsakh developed as an independent school, simultaneously influenced by the traditions of the Cilician and Vaspurakan schools, while preserving a unique national character.

Gandzasar, Dadivank, and other monasteries were not only religious centers but also cultural and scriptorium hubs where valuable manuscripts were produced.

Testimonies of historians (M. Kaghankatvatsi, K. Gandzaketsi) confirm Artsakh's powerful Armenian and cultural past, emphasizing its Christian and Armenian identity.

The reliefs and carvings of Artsakh demonstrate stylistic uniqueness, a high level of artistry, and a harmonious combination of spiritual and secular themes.

In modern times, the cultural heritage of Artsakh is under threat, requiring scientific reassessment as well as preservation and protection strategies. The aim of the article is to reinforce the understanding of Artsakh's Armenian cultural affiliation, reject attempts at its alienation, and promote the preservation of historical memory.

Зарине Сараджян
Кандидат филологических наук, доцент
Институт литературы имени М. Абегяна, НАН РА
Ереванский государственный университет
ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru

АРЦАХ КАК ЦЕНТР СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ: НАУЧНО-КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ ОЧЕРК

Ключевые слова: *Арцах, армянское средневековое искусство, архитектура, литература, миниатюра, историческая память.*

Арцах был важным культурным центром средневековой Армении, где развивались литература, миниатюра, архитектура и скульптура.

XIII–XIV века стали периодом культурного подъёма Арцаха, когда создавались роскошные рукописи, строились монастырские комплексы и процветало художественное мышление.

Миниатюра в Арцахе сформировалась как самостоятельная школа, которая одновременно несла влияние традиций Киликийской и Васпураканской школ, сохраняя национальный и уникальный облик.

Гандзасар, Дадиванк и другие монастыри были не только религиозными, но и культурно-писцовыми центрами, где действовали скриптории и создавались ценные рукописи.

Свидетельства историков (М. Каганкатваци, К. Гандзакеци) подтверждают мощное армянское и культурное прошлое Арцаха, подчёркивая его христианскую и армянскую идентичность.

Барельефы и рельефы Арцаха свидетельствуют о стилистической уникальности, высоком уровне искусства и гармоничном сочетании духовных и светских тем.

В современных условиях культурное наследие Арцаха находится под угрозой, что требует научной переоценки, а также стратегий сохранения и защиты. Цель статьи – укрепить представления о принадлежности Арцаха к армянской культуре, отвергнуть попытки его отчуждения и способствовать сохранению исторической памяти.

Ներածություն

XIII դ. 2-րդ կեսի Կիլիկյան Հայաստանի մանրանկարչության դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ, մանրանկարիչ և գրիչ Թորոս Ռոսլինի ժամանակաշրջանում զարդարվեստի բուռն ծաղկմամբ աչքի էր ընկնում Հայոց Արևելից աշխարհը՝ Արցախ-Ուտիքը։ Գրականությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը, ձեռագիր-հուշարձանները և մանրանկարչությունը 13–14-րդ դարերում բուռն վերելք էին ապրում պատմական Հայաստանի վարչական կազմավորումներից մեկի՝ Արցախի երկրամասում։

Այս շրջանում կառուցվում են համաշխարհային գանձարանում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեցող ճարտարապետական հուշարձաններ: Գրականությունը հարստանում է նոր էջերով:

Միջնադարյան ճարտարապետության անքակտելի մաս է համարվում նաև որմնաքանդակազարդման արվեստը, որն զգալի աղերսներ ունի մանրանկարչության և հատկապես Կիլիկյան Հայաստանի մանրանկարչության դպրոցի հետ: Այս իմաստով առավել ուշագրավ հուշարձան է Գանձասարը, որը, ինչպես փաստում են Հրավարդ Հակոբյանը և Բագրատ Ուլուբաբյանը, Աղթամարից հետո հայ ճարտարապետության մեջ «քանդակային» բնույթի թերևս երկրորդ տաճարն է:

Արվեստաբան Հր. Հակոբյանը, խոսելով 13-րդ դարի որմնանկարչության մասին, նկատում է. «Եթե բացառենք Հայաստանի հյուսիսային շրջանների որմնանկարներով հարուստ մի քանի եկեղեցիները՝ Ախթալա, Քոբայր, Հաղպատ, Անի, ապա 13-րդ դարի Հայաստանի ոչ մի նահանգում եկեղեցական որմնանկարչությունը այդչափ լայն կիրառում չգտավ և նկատելի հետք չթողեց, որքան Արցախ-Ուտիքում» (Հակոբյան, 1989: 25):

Արվեստի վերոնշյալ ճյուղերի զարգացմանը զուգընթաց՝ բուռն վերելք ապրեց նաև մանրանկարչության ուղղությունը:

Գրականություն

Հայ մատենագիտության էջերը հարուստ են Արցախի հայկականությունը փաստող էջերով: Հարցի ուսումնասիրությունը, լինելով հայագիտության առանցքային ուղղություններից, ընդգրկում է պատմիչների վկայություններից ու աշխատություններից մինչև ժամանակակից գիտական միտք: Հարցի ամենաթարմ ուսումնասիրություններից է գրականագետ Վանո Եղիազարյանի «Արցախի հայկականության ակունքները և ադրբեջանական «աղվանագիտության» կեղծիքների հերքում» աշխատությունը (Եղիազարյան, 2023), որը նվիրված է Արցախի հայկականության ակունքների բացահայտմանը և դրանց գիտական հիմնավորմանը՝ սկսած հայ հին գրականության էջերից: «Արցախը՝ որպես հայոց աշխարհի մաս, հիշատակել են նաև պատմիչներ Փավստոսը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Ղևոնդը, Անանուն Զրուցագիրը, Մովսես Դասխուրանցին»,- փաստում է գրականագետը (Եղիազարյան, 2023: 54):

Հայ միջնադարյան մատենագրության գոհարներից է համարվում Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում 7-10-րդ դարերի Հայաստանի, մասնավորապես նրա արևելյան նահանգների՝ Արցախ-Ուտիքի ու հար-

նան երկրների քաղաքական անցուդարձերի, սոցիալ-տնտեսական վիճակի և մշակութային կյանքի մասին։

Հարկ է ընդգծել, որ Աղվանից պատմությունը լրացվել է դարից դար։ 7-րդ դարի Մովսես Կաղանկատվացուն լրացրել է 10-րդ դարի Մովսես Դասխուրանցին՝ Պատմության 3-րդ գրքով (Կաղանկատուացի, 1983։ ԺԸ)։ «Աղուանից աշխարհի պատմութիւնը» բաժանված է երեք գրքի։ Առաջին և երկրորդ գրքի նյութերը հիմնականում վերաբերում են 7-րդ դարի իրադարձություններին, որոնց մի մասին անձամբ է ականատես եղել պատմիչը, մի մասն էլ գրի է առել՝ հիմք ընդունելով մինչ այդ եղած մատենագիտական աղբյուրները։ Ինչպես փաստում է Վարագ Առաքելյանը, Կաղանկատվացու երկի արժեքն այն հատվածների մեջ է, որտեղ պատմիչը՝ իբրև ականատես, շարադրում է Ուտիքում, Արցախում տեղի ունեցած պատմական իրադարձությունները (Կաղանկատուացի, 1983։ ԺԲ)։

Պատմության ուշագրավ մասերից է Վաչագան թագավորի մասին հատվածը։ Արքայի ու նրա կառավարման, երկրամասը շենացնելուն ուղղված նրա գործերի մասին մեծ համակրանքով է շարադրում պատումը Մովսես Կաղանկատվացին։

ԺԷ գլխում, որը վերնագրված է «Թագաւորելն Վաղարշակայ և ի սմանէ առնուլ Վաչագանայ զիւր թագաւորութիւնն Աղուանից» (Կաղանկատուացի, 1983։ 46), պատմելով Վաչագանի մասին, հեղինակը նկատում է. «Եւ կատարի առ Վաչագան արքայ տէրունական ասացեալ բանն, եթէ որ արասցէն և ուսուսցէն, նա մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ։ Զայս իսկ արար աստուածասէր արքայն Վաչագան. յառաջ զինքն դարձուցեալ ի մեղանչական գործոց և ի չար ճանապարհէն և ի գործեալ բազում և զանազան առաքինութիւնս, և զյոլով աշխարհս ի դիւական չարագործ պաշտամանէն ի սուրբ և յուղիղ աստուածապաշտութեանն դարձուցանէր ի պողոտայն, և ի բարեքաւութեան աւարտէր զառաքինութիւնն» (Կաղանկատուացի, 1983։ 46) / «Վաչագան արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՝ «Նա, որ գործում է եւ ուսուցանում, աստծու արքայության մեջ մեծ է կոչվում»։ Հենց այս արեց աստվածասեր Վաչագան թագավորը։ Նախ ինքը ետ կանգնեց մեղանչական արարքներից ու չար ճանապարհից, բազմազան ու բազմաքանակ բարեգործություններ կատարեց եւ շատ երկրներ դիվական, չարի հնարած պաշտամունքից ետ դարձրեց սուրբ, ուղիղ աստվածապաշտության պողոտան ու բարի քավությամբ վերջացրեց իր բարի գործունեությունը» (Կաղանկատվացի, 1969։ 34)։

Հետագա շարադրանքում պատմիչը վկայում է Վաչագան արքայի քրիստոսանվեր ու բարեպաշտ գործունեությունը, եկեղեցաշինական

առաքելությունը, լուսավորապաշտ մղումները, երանելի Վաչագանի տեսիլքը, Սուրբ Գրիգորիսի նշխարների գյուտը և դրա հիման վրա Ամարասում եկեղեցի կառուցելը։

Հիշատակության արժանի է նաև պատմության՝ «Յաղագս սրբոյն Մեսրոպայ եւ ընկերաց նորին պատմութիւն վիպասանաբար»։ Պատմիչը վկայում է, որ «Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի՝ Աղուանից կաթողիկոսի, բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին ի դիւցախելար կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս ատրուշանաց կատարելով յարուցին հալածանս ի վերայ քրիստոնէից։ Մի ոմն ի նախեղելոցն վարդապետաց, որ ի հոգւոյն սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգացն առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց. նա այնուհետև և ի սուրբն երթայր յԵրուսաղէմ մատուցանել ուխտադրութիւն։ Անտի դարձեալ աշակերտօքն, ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն՝ ոսկեխաղաց տեսակաւ, յորում ի տէրունեան խաչէն էր մասնաւորեալ» (Կաղանկատուացի, 1983։ 95) / «Աղվանքի կաթողիկոս Գրիգորիսի նահատակությունից հետո արեւելյան կողմերի ժողովուրդները վերստին թաղվեցին դիցագար կռամոլության մեջ, եւ հաճախակի ուխտագնաց լինելով ատրուշաններին՝ քրիստոնյաների դեմ հալածանքներ սկսեցին։ Մեկը, որ առաջ վարդապետ էր եղել եւ որ սուրբ հոգու հովանավորությամբ երեք ժողովուրդների՝ հայերի, աղվանների ու վրացիների համար տառն էր ստեղծել, դրանից հետո գնաց սուրբը Երուսաղեմ ուխտադրության։ Այնտեղից աշակերտներով վերադարձավ՝ իր հետ արծաթյա մի խաչ ունենալով, որ տեղ-տեղ ոսկուց էր պատրաստված, և որի մեջ Քրիստոսի խաչից մաս էր ձուլված» (Կաղանկատվացի, 1969։ 70)։

Շարունակելով իր պատմությունը Մաշտոցի մասին՝ նա նշում է, որ անցնելով Հայաստանի միջով՝ Մեսրոպը հասնում է արևելյան սահմանները՝ Ուտի գավառը և այդտեղ սկսում քրիստոնեություն տարածել, գիր ու գրականություն ուսուցանել, լուսավորություն սփռել հայոց արևելից երկրում։

Առանձնանշելի է նաև 13-րդ դարի նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ իր «Հայոց պատմություն» երկով, որում կարևոր պատմական տեղեկություններ է հայտնում Անդրկովկասի, Հայաստանի և հատկապես մոնղոլների արշավանքների մասին։ Ինչպես հեղինակն է փաստում ինքն իր մասին, ծնվել է Մեծ Հայքի Արցախ նահանգի Գանձակ երկրում, որի մեջ մտնում էին Գետիկը, Հաղարծինը, Ամարասը, Դիզափայտը և այլ վայրեր։ Այս մասին նշում է նաև Վարագ Առաքելյանը պատմության աշխարհաբար թարգմանության առաջաբանում (Կիրակոս Գանձակեցի, 1982։ 3) և ընդգծում, որ պատմիչի բուն ծննդավայրը հայտնի չէ։

Արցախին առնչվող պատումներից ուշագրավ է «Վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ, և վասն բարեպաշտի իշխանին Ջալալին» գլուխը, որտեղ Կիրակոս Գանձակեցին պատմում է Խաչենում թաթարական արշավանքների, կոտորածների, բռնությունների մասին և այդ իրադարձությունների համատեքստում ընդգծում Ջալալ իշխանի խոհեմությունն ու երկրամասը պաշտպանելու նրա կամքն ու իմաստնությունը: Ջալալ իշխանին պատմիչը տալիս է «բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանգիստ, ողորմած ու աղքատասեր, անապատականների նման աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող» բնորոշումները:

«Այս իմաստուն իշխանս՝ իբրև ետես զյարձակումն անօրինացն, ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ՝ ըստ բարբառոյն պարսից: Եւ իբրև եկին պաշարել զնա, տեսին, զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս: Եւ նա իմաստաբար հաճեաց զմիտս նոցա: Յետոյ չոգաւ և ինքն առ նոսա բազում ընծայիւք: Եւ մեծարանս արարեալ նմա, տան զաշխարհն իւր ի ձեռս նորա՝ այլ ևս յաւելուածով…» (Կիրակոս Գանձակեցի, 1961: 269)» / «Երբ այս իմաստուն իշխանը տեսավ անօրենների հարձակումը, իր երկրի բնակիչներին ամրացրեց Խոխանաբերդ կոչված ամրոցում: Երբ (թաթարները) եկան այն պաշարելու, տեսան, որ հնարավոր չէ այդ ամրությունները գրավել, հաշտությամբ ու խաղաղությամբ նրան կանչեցին իրենց մոտ: Նա իմաստնաբար գոհացրեց նրանց: Նրան մեծարելով, նրա երկիրը հանձնեցին իրեն և այն էլ մեծացնելով…» (Կիրակոս Գանձակեցի, 1982: 193),- վկայում է պատմիչը՝ հավելելով, որ այդպես խոհեմաբար նա կարգավորեց իր երկիրը:

Պատմության ուշագրավ դրվագներից է «Իր կառուցած եկեղեցու մասին» վերտառությամբ գլուխը, որտեղ Գանձակեցին պատմում է հայ ճարտարապետության գոհարներից մեկը համարվող Գանձասարի[1] շինարարության մասին:

«Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով զմբեթարդ երկնանման տաճար փառացն աստուծոյ, ուր հանապազ պատարագի Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ի վանքն, որ կոչի Գանձասար, հանդեպ Խօխանաբերդոյ, ի տեղի շիրմի իւրեանց. և յոլով ամս աշխատ եղեն ի նմա:

[1] Գանձասար - քրիստոնեական եկեղեցի, կառուցել է հայ իշխան Հասան-Ջալալը 1216-1238 թթ., Արցախի Խաչեն գավառում, հայ արվեստի գլուխգործոցներից է: 2023 թ. սեպտեմբերի 19-ից օկուպացվել է Ադրբեջանի կողմից, այժմ օտարացման և պատմական փաստի խեղաթյուրման վտանգի տակ է:

Եւ իբրև առ զաւարտումն, արար նաւակատիս մեծահանդէս առ ի յօրինել զեկեղեցին։ Անդ էր և կաթողիկոսն Աղուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք…և օրինեցին զեկեղեցին բազում քահանայիւք, որ ասէին զթիւ երիցանցն եօթն հարիւր։

Եւ իբրև կնքեցաւ օծմամբ, ճաշ մեծ յօրինեալ. ինքնին իսկ ձեռօք իւրովք պաշտէր զբազմեալսն և տուրս տուեալ ըստ իւրաքանչիւր պատուոյ առատութեամբ՝ արձակէր զամբոխն։ Եւ եղև այս ի ՈՁԹ թուին հայոց, յաւուր մեծի տօնի Վարդավառին» (Կիրակոս Գանձակեցի, 1961: 269-270) / «[Սա] Գանձասար կոչված վանքում, Խոխանաբերդի հանդեպ, իրենց շիրմատեղում կառուցեց գեղեցկազարդ հորինվածքով, գմբեթաձեւ, երկնանման, աստծու փառքի տաճար մի եկեղեցի, ուր մշտապես պատարագվում է Աստծու Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը։ Շատ տարիներ չարչարվեցին նրա վրա։ Երբ ավարտվեց, բացման մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար։ Այնտեղ էր նաեւ Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը բազմաթիվ եպիսկոպոսներով…Եկեղեցին օրհնեցին բազմաթիվ քահանաներով, որոնց թիվը հաշվում էին յոթ հարյուր։

Եվ երբ [եկեղեցին] օծումով մկրտվեց, մեծ ճաշկերույթ սարքեց [Զալալը]. ինքն իր իսկ ձեռքով մատուցում էր նստածներին. եւ յուրաքանչյուրին նրա պատվի համապատասխան առատությամբ նվերներ տվեց ու ճամփու դրեց ամբոխին։ Այս տեղի ունեցավ հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240 թ.) Վարդավառի մեծ տոնի օրը» (Կիրակոս Գանձակեցի, 1982: 194)։

Ճարտարապետություն

Պատմական Արցախի երկրամասում միջնադարյան ճարտարապետությունը ծաղկման շրջան է ապրում՝ կյանք տալով այնպիսի կոթողների, որոնք ոչ միայն տեղական, այլև համաշխարհային մշակութային գանձարանում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն ցայսօր։ Այս առումով ուշագրավ են Գանձասարի, Դադիվանքի վանական համալիրները։

Գանձասարի վանական համալիրի ճարտարապետական նշանակությունը բարձր են գնահատել ոչ միայն հայ, այլև օտարազգի նշանավոր մասնագետներ։

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շառլ Դիլը, խոսելով հայկական ճարտարապետության մասին, որպես համաշխարհային նշանակություն ունեցող երևույթ, առանձնանշում է Գանձասարի վանքը։ Համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարում է Գանձասարը՝ Աղթամարի և Հռիփսիմեի տաճարնե-

ից հետո՝ չորրորդ և հինգերորդ տեղերը հատկացնելով Հաղբատի վանքին և Անիի մայր տաճարին (Թորամանյան, 1948: 25):

«Այդ կոթողը հայ ճարտարապետության մարգարիտն է, հայկական միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը: Դա պետք է համարել 13-րդ դարի հայկական ճարտարապետության հանրագիտարանը» (Якобсон, 1960: 151),- Գանձասարի մասին իր գնահատումներում գրում է միջնադարյան ճարտարապետության անվանի գիտակ Լ. Յակոբսոնը:

Միջնադարյան ճարտարապետության գոհարներից է նաև Դադիվանքը: Ըստ ավանդության՝ այն հիմնադրել է Քրիստոսի առաքյալներից Թադևոսի հետևորդ Դադեն 1-ին դարում, որտեղ էլ ամփոփվել են նրա մասունքները: Դադիվանքի մայր եկեղեցին՝ կենտրոնական կառույցը, 1214 թ.կառուցել է Արցախի Հաթերքի մեծ իշխան Վախթանգի կինը՝ Արզու խաթունը (այս մասին տե՛ս նաև Մեսրոպ Տէր-Մովսեսեան, 1938: 84): Հաջորդ տարիներին համալրվել և ամբողջացել է եկեղեցին: Պատերը զարդարված են յուրօրինակ ու եզակի որմնանկարներով, որոնք մինչև վերջերս պահպանվում էին: Ավանդության համաձայն՝ եկեղեցու խաչքարերի ու որմնաքանդակների զարդանախշերը՝ «քարե ժանյակները», որոնք նուրբ գործվածք են հիշեցնում, կրկնում են Խաչենի իշխանուհի Արզու Խաթունի գործվածքների նախշերը: Պատմության ընթացքում վանքը բազմիցս ենթարկվել է արաբական, սելջուկ-թուրքերի և օտար այլ նվաճողների ասպատակությունների, ավերվել ու կրկին վերականգնվել:

Ցավոք, ադրբեջանական օկուպացիայի ներքո, ինչպես Գանձասարի, այնպես էլ Դադիվանքի և Արցախի մյուս հայկական քրիստոնեական կոթողների ճակատագրերը վտանգված են, ոչնչացման կամ օտարացման սպառնալիքի տակ: Նմանօրինակ փաստերը բազմաթիվ են: «Արցախի մշակութային ժառանգության պահպանությունն այսօր առաջնային մարտահրավերներից մեկն է ինչպես Արցախի և Հայաստանի, անյպես էլ աշխարհասփյուռ հայության համար: Ադրբեջանի Հանրապետության ձևավորումից ի վեր՝ ադրբեջանական պետական քաղաքականության անբաժան մասն է հայկական մշակութային ժառանգության բռնայուրացումը, որը ներառում է ինչպես ֆիզիկական ոչնչացումը, այնպես էլ ձևափոխումը, վերանվանումը և պատմական իրողությունների խեղաթյուրումը»,- փաստում է Համլետ Պետրոսյանի և Հայկուհի Մուրադյանի համահեղինակած «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում» աշխատությունը (Պետրոսյան, Մուրադյան, 2022: 3):

Հուշարձանագետ Սամվել Կարապետյանն իր ուսումնասիրություններում արձանագրում է, որ Ադրբեջանը հայկական միջնադարյան հու-

շարձանների ոչնչացման քաղաքականությունը շարունակել է բազմամյա ժամանակահատվածում՝ ԽՍՀՄ տարիներին, անկախության, պատերազմական և անգամ զինադադարի ժամանակաշրջանում: «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս» աշխատությունում հուշարձանագետը փաստում է. «1994 թ. մայիսից հաստատված զինադադարից հետո և ցարդ հայկական հուշարձաններն ընդհանրապես, իսկ պաշտամունքային և գերեզմանական հուշարձանները մասնավորապես, Ադրբեջանում շարունակում են ոչնչացնել արդեն պետական ամենաբարձր մակարդակով՝ անփառունակ այդ գործին մասնակից դարձնելով նույնիսկ երկրի ռազմական ուժերին: Ավերվել են ոչ միայն այն հուշարձանները, որոնք թեկուզ մի կարճ ժամանակահատված հայտնվել էին ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո, այլև այնպիսիք, որոնք գտնվում էին ռազմական գործողություններն ընդգրկած տարածքներից շատ հեռու» (Կարապետյան, 2017: 8): Նա նաև նշում է, որ ավերումներն ընդգրկել են եկեղեցիներ, վանքեր, մատուռներ ու խաչքարերով գերեզմանոցներ: Վերոնշյալը փաստում է, որ Արցախի հայկական միջնադարյան ճարտարապետությունը ենթարկվել է շարունակական ոչնչացման, այժմ էլ գտնվում է ոչնչացման սպառնալիքի ներքո, ինչը ընդգծում է արցախյան ճարտարապետության ոչ միայն մշակութային և կրոնական, այլև քաղաքական և պատմագրական նշանակությունը

Քանդակագործություն, որմնանկարչություն

Պատմական Արցախի միջնադարյան ճարտարապետության հետ անքակտելիորեն կապված է որմնաքանդակագործության արվեստը, որը կարելի է համեմատել հայ մանրանկարչության, մասնավորապես Կիլիկյան դպրոցի արվեստի ավանդույթների հետ: Այս առումով հայ որմնաքանդակազարդության արվեստի յուրօրինակ հանրագիտարան կարելի է համարել Գանձասարի որմնաքանդակագործությունը:

Արվեստաբան Հրավարդ Հակոբյանը, հղում անելով Բագրատ Ուլուբաբյանի ուսումնասիրությանը, ամփոփ ներկայացնում.է «Ներսում, մայր եկեղեցու թմբուկի հիմքին տեղադրված են չորս ավետարանիչներին խորհրդանշող գլուխներ: Գլխավոր բեմառաջքը զարդարված է երկրաչափական ու բուսական ոճավորված քանդակամոտիվներով, որոնք ընդգրկված են խոշոր ռոմբաշրջանակների մեջ: Թմբուկի արտաքին նիստերը մեկընդմեջ ընդհատվում են անկյունաձեւ խորշերով, որոնց ներսում տեղադրված են զանազան քանդակախմբեր, կտիտորներ, որոնք գլուխներից վեր պահել են եկեղեցու մանրակերտը: Կտիտորներից երկուսը ձեռքները

վեր պարզած աղոթող կանայք են: Նրանց հովանի են անում ճակատային դիրքով պատկերված մարդագլուխ արծիվները» (Հակոբյան, 1989: 19):

Բագրատ Ուլուբաբյանն իր «Գանձասար» աշխատությունում մանրազնին քննել է Գանձասարի բարձրաքանդակները: Նա նկատում է, որ կանանց այդ պատկերաքանդակները մեր միջնադարյան հուշարձանների համար եզակի երևույթ են. ընդ որում, պատկերված են Հասան-Ջալալի մերձավորագույն հարազատները. մայրը՝ Խորիշահը և կինը՝ Մամքանը:

Որմնաքանդակներում հանդիպում են տերունական թեմատիկ տեսարաններ, օրինակ՝ Հիսուսի պատկերը, մեղսագործության տեսարանը, «Աստվածամայրը մանկան հետ» պատկերը, Հիսուսի խաչելության տեսարանը, Քրիստոսի տարածած թևերի մոտ երկու հրեշտակներ են, թևատակին՝ ծնկաչոք մարդիկ՝ աղերսողի դիրքով և այլն: Բ. Ուլուբաբյանը փաստում է. «Գանձասարի բարձրաքանդակներում շքեղ ու բազմազան արտացոլված հոգևոր ու աշխարհիկ թեմաները լայնորեն տարածված էին բուն Արցախի գավառներում կանգնած եկեղեցական ու աշխարհիկ շինություններում և առանձնակի բազմազանությամբ՝ խաչքարերում» (Ուլուբաբյան, 1981: 5): Ըստ արվեստաբանի փաստարկման՝ աշխարհիկ թեմաների ներմուծումը բարձրաքանդակային արվեստում այստեղ առանձնահատկություն է: Բուն կյանքից վերցված մարդկային պատկերների քանդակները Հայաստանում հազվադեպ էին այդ շրջանում՝ ի տարբերություն հոգևոր-տերունական թեմաներով քանդակների: Եվ պատահական չէ, որ այս առումով Հովսեփ Օրբելին հիշատակել է. «Մարդկանց պատկերաքանդակներով խաչքարեր առաջին անգամ հայտնաբերվել են Հայաստանի այն մասում, ուր առհասարակ բարձրաքանդակներով զարդանախշելը շատ է սիրված, ուր տաճարների պատերին, Հայաստանի մյուս մասերում ևս, սովորական կտիտորական խմբերից բացի, հանդիպում են բավական խոշոր բարձրաքանդակ պատկերներ,- իսկ դա Խաչե՛նն[1] է» (Орбели, 1963: 196):

Ձեռագիր մատյաններ, մանրանկարչություն

Հոգևոր և նյութական մշակութային կյանքի զարթոնքը նպաստեց նաև գրչության կենտրոնների ստեղծմանը, ձեռագիր մատյանների ընդօրինակման և պատկերազարդման ուղղության զարգացմանը:

Այդ շրջանում նշանավոր և ինքնատիպ գրչության կենտրոն էր Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսանիստ՝ Գանձասարը: Ձեռագրագետ Օ. Եգանյանը իր «Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն» ուսում-

[1] Խաչեն - պատմական գավառ Մեծ Հայքի Արցախ նահանգում, նաև՝ Արցախի միջնադարյան անվանումներից:

նասիրության մեջ փաստում է, որ Գանձասարը ժամանակին որպես կաթողիկոսանիստ ունեցել է նաև իր գրչատունն ու գրչագիր մատյանների ժողովածուն (Եգանյան, 1971: 59-62, տե՛ս նաև Մինասյան, 2014, 223-242):

Ըստ Հր. Հակոբյանի՝ պահպանված ձեռագիր մատյանների հիշատակարանային տվյալներով՝ 12-14-րդ դդ. Արցախ-Ուտիքի տարածքում գործել են երեք-չորս տասնյակ գրչակենտրոններ: Ընդօրինակվել է 1000-ից ավելի ձեռագիր-մատյան (Հակոբյան, 1989: 29), հիմնականում՝ Աստվածաշունչ, Ավետարան, Ճառընտիր, Նարեկ և այլն, այսինքն՝ կրոնական գրականություն:

Խոշոր գրչակենտրոններ են եղել նաև Գանձակում՝ Շուշիում, Ամարասում, Թեղասեռում և այլն: Նշյալ գրչակենտրոններից ավանդվել և այսօր Մատենադարանում պահպանվում են արժեքավոր ձեռագրեր:

Պատմիչների Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ մոնղոլները հաճախ քրիստոնյաներին էին վաճառում իրենց Սուրբ գրքերը: Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, երբեմն նաև Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում ստեղծված ձեռագիր մատյանները Արցախ էին գալիս և՛ վերոնշյալ եղանակով՝ փրկագնման, և՛ նվիրատվության միջոցով: Այս կերպ նաև արվեստն ու գրչությունն էին զարգանում՝ հարստանալով կիլիկյան, Արևմտյան Հայաստանի արվեստի տարբեր դպրոցների տարրերով ու ավանդույթներով:

Ձեռագիր մատյանները զարդարվում էին մանրանկարչությամբ: 13-րդ դարում պատկերազարդված հայտնի ձեռագիր մատյաններից արվեստաբան Հրավարդ Հակոբյանն առանձնանշում է Խոխանաբերդի իշխան Վախթանգ-Տանգիկի և նրա կին Խորիշահի պատվիրած ավետարանը՝ Արցախ-Ուտիքում ստեղծված ու պահպանված:

Այս շրջանում, որպես տաղանդավոր ծաղկող, հիշատակվում է նկարիչ Թորոսի անունը: «Ձեռագիրն ունի տասը խորան,- գրում է Հր. Հակոբյանը,- Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ավետարանիչների անվանաթերթերը, երկու ավետարանիչի դիմանկար, մեկ տերունական պատկեր և բավական ուշագրավ լուսանցազարդեր» (Հակոբյան, 1989: 39):

Ուսումնասիրելով հայ մանրանկարչության առանձին դպրոցների պատմությունը՝ արվեստաբանը նկատում է, որ ազգային արվեստում, նրա առանձին դպրոցների միջև միշտ էլ եղել է ընդհանրություն, ազգային ամբողջական նկարագիր: Սակայն պատմության ընթացքում, լինելով օտարների տիրապետության տակ, որոշակի ազդեցություններ են կրել՝ որպես ապացույց բերելով Վասպուրականի օրինակը (սելջուկ-մոնղոլների տիրապետություն, անմիջական շփումներ Արևելքի ժողովուրդների հետ և այլն):

«Նման ազդեցություններից ու աղերսներից ապահովագրված չէ և ոչ մի դպրոց, և ոչ մի արվեստ։ Բայց հայկական մանրանկարչության բոլոր դպրոցների մեջ, թվում է, իր ազգային նկարագիրն առավել մաքուր պահպանել են Հայաստանի հյուսիսային շրջանները՝ Սյունիքը, Սևանի ավազանը, Արցախ-Ուտիքը» (Հակոբյան, 1989: 121)։

Միջնադարյան Արցախի մանրանկարչությունը համահայկական մշակութային ժառանգության անբաժան և կարևոր բաղադրիչներից է։ Այն ոչ միայն ներառվում է հայկական մանրանկարչության ավանդական ուղղությունների մեջ, այլև հանդես է գալիս որպես տարածքային ինքնատիպ մոտեցումների յուրօրինակ արտահայտություն։ Այն կրում է նաև տեղական գեղարվեստական ավանդույթների ու ոճական առանձնահատկությունների ազդեցությունը, որոնք ձևավորվել են տվյալ տարածաշրջանի պատմական, կրոնական, մշակութային, ինչպես նաև աշխարհագրական յուրահատկությունների հիման վրա։

Աչքի ընկնելով ոճական ճկունությամբ, նրբագեղ պարզությամբ և կոմպոզիցիոն հստակությամբ՝ հաճախ դրանք առանձնանում են խորհրդանշական պատկերագրությամբ հագեցած տեսարաններով, որոնք արտացոլում են ինչպես աստվածաշնչյան թեմաներ, այնպես էլ տեղային հոգևոր, մշակութային ու երբեմն աշխարհիկ ենթատեքստը։ Արցախի մանրանկարչության մեջ դիտվում է թե՛ համահայկական ոճական համատեքստին բնորոշ ընդհանրությունը, թե՛ որոշակի ինքնուրույնություն։

Այս ժառանգությունը նաև վկայում է միջնադարյան Արցախի մշակութային ու հոգևոր կյանքի բարձր մակարդակի մասին։ Այնպիսի գրչատներ, վանական կենտրոններ և հոգևոր կրթական օջախներ, ինչպիսիք էին Գանձասարի, Դադիվանքի և մյուս վանական համալիրները, եղել են ոչ միայն գրչության, այլև մանրանկարչության ու արվեստի մյուս ճյուղերի կենսունակ օջախներ։ Այդ կենտրոններում ստեղծված մանրանկարները և ձեռագիր մատյանները նյութական ապացույցներ են Արցախի մտավոր ու գեղարվեստական վերելքի, արվեստի ծաղկման, հայկական ինքնության և որպես մշակութային կենտրոն նրա դերակատարման մասին։

Եզրակացություն

Արցախը միջնադարյան Հայաստանում կարևոր մշակութային կենտրոն էր, որտեղ զարգանում էին գրականությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունն ու քանդակագործությունը։ 13-14-րդ դարերը Արցախի մշակութային վերելքի շրջանն էին, երբ ստեղծվում էին շքեղ ձեռագրեր, կառուցվում էին վանական համալիրներ, և ծաղկում էր գեղարվեստական մտածողությունը։

Մանրանկարչությունն Արցախում ձևավորվել է որպես ինքնատիպ դպրոց, որը միաժամանակ կրում էր Կիլիկյան, Վասպուրականի դպրոցների ավանդույթների ազդեցությունը՝ պահպանելով ազգային ու յուրահատուկ նկարագիրը:

Գանձասարը, Դադիվանքը և այլ վանքեր ոչ միայն կրոնական, այլև մշակութային-գրչության կենտրոններ էին, որտեղ գործել են գրչատներ և ստեղծվել են արժեքավոր ձեռագրեր:

Պատմիչների (Մովսես Կաղանկատվացի, Կիրակոս Գանձակեցի) վկայությունները փաստում են Արցախի հայկական և մշակութային հզոր անցյալի մասին՝ ընդգծելով նրա քրիստոնեական և հայկական ինքնությունը:

Արցախի որմնաքանդակներն ու բարձրաքանդակները վկայում են ոճական յուրահատկության, բարձր արվեստի և հոգևոր-աշխարհիկ թեմաների ներդաշնակ զուգակցման մասին:

Լինելով միջնադարյան հայկական մշակույթի ծաղկուն կենտրոն՝ Արցախում ձևավորվել էր գրչության և արվեստի ինքնատիպ համակարգ. գրականությունը, գրչությունն ու ճարտարապետությունը փոխկապակցված են գործել՝ ստեղծելով ինքնուրույն, բայց համահայկական նշանակություն ունեցող մշակութային միջավայր:

Գրականության ցանկ

1. **Եգանյան Օ.,** Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «*Էջմիածին*», 1971, Դ, էջ 59-62:
2. **Եղիազարյան Վ.,** Արցախի հայկականության ակունքները և աղրբեջանական «աղվանագիտության» կեղծիքների հերքում, Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2023, 328 էջ:
3. **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետության ծագման, զարգացման և փոխազդեցությունների հարցերի շուրջ, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 1948, 307 էջ:
4. **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմություն, Երևան, «Սովետական գրող», 1982, 352 էջ:
5. **Կարապետյան Ս.**, Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2017, 172 էջ:
6. **Հակոբյան Հ.,** Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ., Երևան, «Խորհրդային գրող», 1989, 160 էջ:
7. **Մկրտչյան Շ.,** Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, 216 էջ:
8. **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան» հրատ., 323 էջ:

9. **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 412 էջ։
10. **Պետրոսյան Մ., Մուրադյան Հ.**, Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան, 2022, 56 էջ։
11. **Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսեսեան,** Հայկական երեք մեծ վանքերի Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղեմ, 1938, 152 էջ։
12. **Ուլուբաբյան Բ.,** Գանձասար, Երևան, «Հայաստան» հրատ., 1981, 168 էջ։
13. **Մինասյան Թ.,** Գանձասարի գրչության կենտրոնը, *Բանբեր Մատենադարանի*, Եր., 2014, N 20, էջ 223-242:
14. **Якобсон А.Л.,** Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). Исследования по истории культуры народов Востока, сборник в честь И. А. Орбели, М.-Л., 1960, с. 151.
15. **Орбели И.А.,** Избранные труды, Е, 1963, 684 с.

References

1. **Eghanyan O.,** The Collection of Armenian Manuscripts of Gandzasar, “Etchmiadzin”, 1971, No. D, pp. 59–62 (in Armenian).
2. **Yeghiazaryan V.,** The Sources of the Armenianes of Artsakh and the Refutation of the Forgery of Azeri “Agvan Studies”, Yerevan: VMV-Print, 2023, 328 pp (in Armenian).
3. **Toramanian T.,** On the Origins, Development and Interactions of Armenian Architecture, in Materials on the History of Armenian Architecture, Vol. B, Yerevan, 1948, 307 pages (in Armenian).
4. **Kirakos Gandzaketsi,** History of the Armenians, Yerevan, "Soviet Writer", 1982, 352 pages (in Armenian).
5. **Hakobyan H.,** Miniature Painting of Artsakh-Utik in the 13th–14th Centuries, Yerevan, "Soviet Writer", 1989, 160 pages (in Armenian).
6. **Karapetyan S.,** Azerbaijan Out of Civilization. Yerevan: Foundation for the Study of Armenian Architecture, 2017, 172 pp (in Armenian).
7. **Mkrtchyan Sh.,** Architectural Monuments of Mountainous Karabakh, Yerevan, 1980, 216 pages(in Armenian) .
8. **Movses Kaghankatvatsi,** The History of the Country of Aluank. Yerevan: Hayastan Publishing House, 323 pages (in Armenian).
9. **Movses Kaghankatvatsi,** History of the Country of Aghvank, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1983, 412 pages (in Armenian).
10. **Minasyan, T.,** “The Scriptorial Center of Gandzasar”, Banber Matenadarani, Yerevan, 2014, No. 20, pp. 223–242 (in Armenian).
11. **Petrosyan, M., Muradyan, H.,** The Cultural Heritage of Artsakh under Attack. Yerevan, 2022, 56 pp (in Armenian).
12. **Movses archbishop Ter-Movsesyan,** The Three Great Armenian Monasteries: Tatev, Haghartsin, and Dadivank and their Monastic Structures, Jerusalem, 1938, 152 pages (in Armenian).
13. **Ulubabyan B.,** Gandzasar, Yerevan, "Hayastan" Publishing House, 1981, 168 pages (in Armenian).

14. **Jakobson A.L.,** From the History of Armenian Medieval Architecture (Gandzasar Monastery of the 13th Century), in Studies in the History of the Culture of Eastern Peoples, Collection in Honor of I. A. Orbeli, Moscow-Leningrad, 1960, p. 151(in Russian).
15. **Orbeli I.A.,** Selected Works, Yerevan, 1963, 684 pages (in Russian).

Զարինե Սարաջյան *– բ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի կրտսեր գիտաշխատող, ԵՊՀ մարքեթինգի բաժնի ավագ մասնագետ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ դասական գրականություն, նորագույն և ժամանակակից գրականություն, գրականության տեսություն: Հեղինակ է 3 գրքի և 14 հոդվածի:*

ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru

Zarine Sarajyan *– PhD in Philology, Associate Professor, Institute of Literature after M. Abeghyan of NAS RA, Department of New Armenian Literature, Junior Researcher, Senior Specialist of YSU Marketing Department. Scientific interests: Classical Literature, Modern and Contemporary Literature, Literary Theory. Author of 3 books and 14 articles.*

ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru

Зарине Сараджян *– кандидат филологических наук, доцент, младший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, главный специалист отдела маркетинга ЕГУ. Научные интересы: классическая литература, новейшая и современная литература, теория литературы. Автор 3 книг и 14 статей.*

ORCID ID: 0009-0005-4103-2492
zsarajyan@mail.ru